

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԵՎ ԻՐԱՎԱՆՈՐՄԻ  
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱԲՅԱՆ

Իրավաբանական դոկտորինում իրավական կանխավարկածի և իրավանորմի հարաբերակցության հարցն ամեննին էլ նոր չէ: Մասնավորապես, գիտական վեճի առարկա հարցադրումը, որը ձևավորել է երկու տեսակետ, հետևյալն է՝ արդյո՞ք իրավական կանխավարկածն իրավանորմ է, թե՞ ոչ. գիտնականների մի խումբը հակված է այն իրավանորմի հետ նույնացնելուն, իսկ մյուս խումբը փորձում է հերքել դրա նույնական լինելը: Այլ կերպ ասած՝ իրավական կանխավարկածների հետազոտության վերաբերյալ իրավաբանական և փիլիսոփայական ուղիները նշված հարցի շուրջ չեն կարողանում ձևավորել միասնական մոտեցում: Մինչդեռ այս խնդրի լուծումն իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման կարևոր պայմաններից է: Ուստի սույն հոդվածի շրջանակներում առաջարկում ենք նախ ներկայացնել նշված հարցադրման վերաբերյալ առկա մոտեցումները, դրանց առավելությունները կամ թերությունները, այնուհետև անդրադառնալ այն հարցին՝ արդյո՞ք իրավունքի գործիքակազմային տեսությունն ունակ է վերջ դնելու այս բանավեճին: Հարկ է նշել, որ նշված հարցի վերաբերյալ մեր մոտեցումը հետևյալն է. իրավական կանխավարկածը և իրավանորմը չեն կարող նույնանալ. դրանք տարբեր իրավական երևույթներ են: Այժմ խոսենք առարկայական:

Այսպես, Օ. Ա. Կուզնեցովան այն կարծիքին է, որ իրավական կանխավարկածն օժանդակ իրավանորմ է, որին բնորոշ են նորմ-կարգադրության բոլոր հատկանիշները<sup>1</sup>: Այս տեսակետը պաշտպանում է նաև Մ. Վ. Կարասևան<sup>2</sup>: Խնդիրն այն է, որ երբ ուսումնասիրում ենք Օ. Ա. Կուզնեցովայի աշխատանքը, ակնհայտ է դառնում, որ հեղինակն ինքն իրեն լրջորեն հակասում է: Մասնավորապես, երբ նա խոսում է իրավական կանխավարկածի հասկացության մասին, նշում է, որ այն քաղաքացիաիրավական նորմում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված ինդուկտիվ հավանական ենթադրություն է<sup>3</sup>: Աշխատանքի երկրորդ պարագրաֆում՝ «Կանխավարկածը որպես իրավաբանա-

<sup>1</sup> Տե՛ս **Кузнецова О. А.** Презумпции в российском гражданском праве. дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2001, էջ 48:

<sup>2</sup> Տե՛ս **Карасева М. В.** Презумпции и фикции в части первой Налогового кодекса РФ // Журнал российского права. 2002, № 9, էջ 71:

<sup>3</sup> Տե՛ս **Кузнецова О. А.**, նշվ. աշխ., էջ 28:

կան տեխնիկայի հնարք և իրավունքի նորմ», արդեն կանխավարկածը դիտարկում է որպես օժանդակ իրավանորմ: Եթե առաջնորդվենք հեղինակի տրամաբանությամբ, ապա կստացվի, որ սկզբում կանխավարկածը հավանական ենթադրություն է, իսկ այնուհետև՝ իրավանորմ է իրավանորմում կամ իրավանորմի մասին:

Դ. Մ. Շեկինը, խոսելով իրավական կանխավարկածի և իրավաբանական նորմի մասին, նշում է, որ այն մի կողմից պարտադիր դատողություն է, մյուս կողմից էլ՝ իրավունքի նորմ, որում այդ դատողությունն ամրագրված է<sup>4</sup>: Այնուհետև քննարկելով իրավական կանխավարկածի հատկանիշները՝ եզրահանգում է, որ այն վարքագծի պարտադիր կանոնի մասին իրավունքի նորմ է<sup>5</sup>: Այս դեպքում հարց է առաջանում՝ ի՞նչ ենք հասկանում վարքագծի պարտադիր կանոնն ասելով: Կարելի է ընդամենը ենթադրել, որ հեղինակը խոսում է այն մասին, որ կանխավարկածն օժտված է համապարտադիրության հատկանիշով և պարտադիր է իրավունքի սուբյեկտների համար: Սակայն անպատասխան է մնում այն հարցը, թե ինչպես է մի դեպքում կանխավարկածը համարում իրավանորմ, մյուս դեպքում՝ դատողություն:

Հակասությունն ավելի է խորանում, երբ Դ. Մ. Շեկինը նշում է, որ կանխավարկածը ենթադրվող փաստի մասին պարտադիր դատողությունն սահմանող հատուկ նորմատիվ կարգադրություն է<sup>6</sup>: Փաստորեն, այս դեպքում էլ այն վերափոխվում է նորմատիվ կարգադրության: Եթե համարենք, որ «հատուկ նորմատիվ կարգադրության» ներքո նկատի է ունեցել իրավանորմը, ապա այս դեպքում հարց է առաջանում՝ ինչպես է ստացվում, որ կանխավարկածը միայն ենթադրվող փաստի մասին դատողությունն սահմանող իրավանորմ է: Եթե իրավանորմ է, ապա «ենթադրման» առարկա կարող են լինել նաև սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները:

Համանման մոտեցում է ցուցաբերում նաև Վ. Կ. Բաբաևը՝ իրավական կանխավարկածը դիտելով որպես վարքագծի կանոն<sup>7</sup>: Եթե այդպես է, ապա ինչու է հեղինակն իրավական կանխավարկածը բնորոշել որպես իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության մասին իրավանորմում ամրագրված ենթադրություն<sup>8</sup>: Այսինքն՝ մի կողմից ասել, որ իրավական կանխավարկածը ենթադրություն է փաստի մասին, իսկ հետո պնդել վերջինիս վարքագծի կանոն լինելը, նշանակում է՝ հեղինակը պարտավոր էր պատասխանելու այն հարցին (որը չի արել), թե որ դեպքում է ենթադրություն, որ դեպքում՝ վարքագծի կանոն:

Մ. Ն. Բրոննիկովան, անդրադառնալով իրավական կանխավար-

<sup>4</sup> Տե՛ս Սեкин Д. М. Юридические презумпции в налоговом праве. Учебное пособие. М.: Изд. МЗ Пресс, 2002, էջ 40:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 41:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Տե՛ս Бабаев В. К. Презумпции в советском праве. Горький: Изд. ГВШ МВД СССР, 1974, էջ 62:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 14:

կածի և իրավանորմի հարաբերակցության հարցին, նախ նշում է, որ իրավանորմի հիպոթեզը քաղաքացիաիրավական կանխավարկածի հիմքն է, դիսպոզիցիան՝ քաղաքացիաիրավական կանխավարկածը<sup>9</sup>: Պատասխանելով այն հարցին՝ ի վերջո կանխավարկածն իրավանորմ է, թե՞ ոչ, արձանագրում է, որ այն որպես այդպիսին քաղաքացիաիրավական նորմ չէ: Այնուհետև նշում է, որ կանխավարկած պարունակող քաղաքացիաիրավական նորմը կարելի է անվանել ենթադրյալ քաղաքացիաիրավական նորմ<sup>10</sup>: Ստացվում է՝ հեղինակը, ինչպես Օ. Ա. Կուզնեցովան, կանխավարկածը դիտարկում է իրավանորմ իրավանորմում: Տարբերությունը գուտ ընտրված անվանումներն են: Եթե Օ. Ա. Կուզնեցովան կանխավարկածն անվանում էր օժանդակ նորմ, ապա Մ. Ն. Բրոննիկովան՝ ենթադրյալ քաղաքացիաիրավական նորմ և բնորոշում որպես քաղաքացիաիրավական նորմում ամրագրված ենթադրություն պարունակող կանոն<sup>11</sup>:

Եթե մի պահ ընդունենք, որ հեղինակը ճիշտ է, ապա, միևնույնն է, հարց է առաջանում՝ ինչպե՞ս է որոշում, որ քաղաքացիաիրավական կանխավարկածի հիմքը հիպոթեզն է: Մասնավորապես, եթե առաջնորդվում ենք հեղինակի տրամաբանությամբ, ապա ստացվում է, որ կանխավարկածը թույլ է տալիս կատարել ենթադրություն միայն իրավանորմի դիսպոզիցիայում նկարագրված իրավունքների և պարտականությունների մասին: Մ. Ն. Բրոննիկովան որպես հիմնավորում վկայակոչում է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 743-րդ հոդվածի 1-ին կետը՝ նշելով՝ եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա կապալառուն պարտավոր է կատարել տեխնիկական փաստաթղթերում և նախահաշվում նշված բոլոր աշխատանքները: «Տվյալ դեպքում», - գրում է հեղինակը, - կանխավարկածի հիմքը կապալի պայմանագիրն է, քաղաքացիաիրավական կանխավարկածը, կապալառուն պարտավոր է կատարել տեխնիկական փաստաթղթերում և նախահաշվում նշված բոլոր աշխատանքները»<sup>12</sup>:

Եթե կանխավարկածի հիմքը հիպոթեզն է, ապա ինչո՞ւ է սահմանման մեջ նշում, որ կանխավարկածը քաղաքացիաիրավական նորմում ամրագրված իրավաբանական փաստը բնութագրող հատկանիշի մասին ենթադրություն պարունակող կանոն է, որը կարող է հերքվել: Եթե այդպես է, ապա «ենթադրման» առարկա կարող են լինել նաև հիպոթեզում նկարագրված իրավաբանական փաստերը: Օրինակ՝ նույն ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է, որ քաղաքացիաիրավական պայմանագիրը հատուցելի է, եթե

<sup>9</sup> Ст' у **Бронникова М. Н.** Гражданско-правовая презумпция по российскому законодательству: содержание, правовые формы и применение: дисс. канд. юрид. наук. Казань, 2006, էջ 83:

<sup>10</sup> Ст' у նույն տեղը:

<sup>11</sup> Ст' у նույն տեղը, էջ 9:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 81-82:

այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրի բովանդակությունից կամ էությունից<sup>13</sup>: Հետևաբար, եթե հայցվորը դատարանում վիճարկում է այն փաստը, որ պայմանագիրն անհատույց է, ապա գործում է պայմանագրի հատուցելի լինելու փաստի կանխավարկածը, քանի դեռ այն չի հերքվում: Ստացվում է, որ Մ. Ն. Բրոննիկովան, որը հակված է կանխավարկածն իրավանորմի հետ չնույնացնելուն, այնուամենայնիվ արտահայտում է դատողություններ, որոնք ակնհայտորեն հակասում են միմյանց:

Քննարկվող հարցի վերաբերյալ ոչ տիպական մոտեցում է ցուցաբերել Ե. Բ. Տարբագանը՝ նշելով, որ իրավաբանական կանխավարկածն օրենսդրի կողմից իրավանորմի հիպոթեզի շարադրման հնարք է: Այնուհետև հեղինակը գրում է, որ իրավաբանական կանխավարկածը կիրառելով՝ օրենսդիրն իրավանորմի հիպոթեզում սահմանում է իրավահարաբերության փաստակազմը և կանոնակարգում է սուբյեկտի կողմից վերջինիս ճանաչման գործընթացը<sup>14</sup>: Համանման մոտեցում է ցուցաբերում նաև Կ. Բ. Կալինովսկին՝ նշելով, որ իրավական կանխավարկածն իրավաբանական փաստի հաստատման եղանակ է, որի դեպքում օբյեկտիվ իրականության մեջ առկա որևէ երևույթի հիման վրա իրավաբանական փաստը ենթադրվում է գոյություն ունեցող<sup>15</sup>:

Եթե լինենք հակիրճ, ապա կարող ենք ասել, որ այս դեպքում էլ նշված հեղինակները բացառում են իրավանորմի դիսպոզիցիայում նկարագրված պայմանների առկայության կամ բացակայության մասին իրավական կանխավարկածի միջոցով դատողություն կատարելու հնարավորությունը: Հարկ է նշել, որ իրավական կանխավարկածն իրավանորմից տարանջատելու կողմնակիցների շարքին են դասվում նաև Ն. Ֆ. Կաչուրը և Ս. Ա. Մոսինը: Առաջինը, կանխավարկածը տարանջատելով իրավանորմից, նշում է, որ այն իրավական կարգավորման միջոց չէ<sup>16</sup>: Սակայն Ն. Ֆ. Կաչուրը միևնույն ժամանակ չի տալիս այն հարցի պատասխանը, որ եթե իրավական կանխավարկածն իրավական միջոց չէ, այդ դեպքում ի՞նչ է: Իսկ Ս. Ա. Մոսինն էլ, իրավական կանխավարկածը բնորոշելով որպես իրավական կարգավորման համար անհրաժեշտ ենթադրություն, որն ուղղակի կամ անուղղակի կերպով ամրագրված է իրավանորմում<sup>17</sup>, նշում է, որ այն իրավահարաբե-

<sup>13</sup> Տե՛ս [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_5142/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/), վերջին մուտքը՝ 14.01.2020թ.:

<sup>14</sup> Տե՛ս **Тарбагаева Е. Б.** Юридические предположения в гражданском процессе (исковое производство): дисс. канд. юрид. наук. Ленинград, 1983, էջ 42-43:

<sup>15</sup> Տե՛ս **Калиновский К. Б.** Отграничение правовых презумпций от обоснования юридических норм // Философия и право: Материалы Международной научно-практической конференции, 28 февраля 2006 года. СПб.: Изд. СПбГУП, 2006, էջ 62:

<sup>16</sup> Տե՛ս **Качур Н. Ф.** Презумпции в советском семейном праве. дисс. канд. юрид. наук. Свердловск, 1982, էջ 18:

<sup>17</sup> Տե՛ս **Мосин С. А.** Конституционные принципы и презумпции-принципы: монография. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юстицинформ, 2018, էջ 33:

րությունների կարգավորման գործիք է, որը չի նույնանում իրավանորմի հետ<sup>18</sup>: Որքան էլ իրավահարաբերությունների կարգավորման գործիքի մասով հեղինակի կարծիքը մեզ համար ընդունելի է, այնուամենայնիվ վերջինս չի անդրադառնում այն հարցին, թե ինչպես է իրավական կանխավարկածը տարանջատում իրավանորմից:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ իրավաբանական դոկտրինում իրավական կանխավարկածի և իրավանորմի հարաբերակցության հարցը դեռևս հեռու է լուծում ստանալուց: Այս իրավիճակը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ իրավաբանական հանրությունը չի հրաժարվելու ավանդական մոտեցումներից և չի փորձելու իրավական կանխավարկածի էությունը բացահայտել նորովի: Հետևաբար, ի նչ անել: Ելնելով մեր առջև դրված նպատակից և խնդիրներից՝ առաջարկում ենք.

- իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում ներկայացնել իրավանորմի՝ որպես իրավական միջոցի ընդհանուր բնութագիրը.
- իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում իրավանորմի և իրավական կանխավարկածի տարբերությունները թվարկելով՝ քննարկել իրավանորմի և կանխավարկածի՝ որպես օժանդակ իրավական միջոցի հարաբերակցությունը:

Իրավունքը՝ որպես սոցիալական երևույթ, կոչված է ներթափանցելու այնտեղ, որտեղ առկա է մարդկային գործունեություն, այնտեղ, որտեղ կարող են առաջանալ վեճեր կամ բախումներ<sup>19</sup>: Ինչ խոսք, մարդկային գործունեության շրջանակներում, որի ընթացքում առաջանում են կամ կարող են առաջանալ տարատեսակ հարաբերություններ, անշուշտ առաջանում է նաև վերջիններիս արդարացի և օբյեկտիվ կարգավորման անհրաժեշտություն: Այլ կերպ ասած՝ իրավունքը, լինելով սոցիալական ազդեցության կարգավորիչ, կոչված է ապահովելու հասարակական հարաբերությունների բնականոն և հարաշարժ զարգացումը: Հետևաբար, միանգամայն օրինաչափ է, երբ հասարակական հարաբերությունների կանոնակարգումը դիտարկվում է այնպիսի կատեգորիաների շրջանակներում, ինչպիսիք են նպատակը, միջոցը և արդյունքը:

Բնական է, որ նպատակների կենսագործման և արդյունքների արձանագրման համար անհրաժեշտ են իրավական միջոցներ: Մի կողմ թողնելով այն հարցը, թե իրավունքն առանձին վերցրած ինչպիսի նպատակներ է հետապնդում, և առաջնորդվելով հավաքական առումով հասարակական հարաբերությունները կարգավորելու իրավունքի նպատակով՝ կարող ենք արձանագրել, որ վերջինս առաջ է բերում իրավանորմերի ձևավորման անհրաժեշտություն<sup>20</sup>: Այլ խոսքով ասած՝ իրավա-

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 37:

<sup>19</sup> Տե՛ս **Ренненкампф Н. К.** Юридическая энциклопедия. 4-е изд. Киев: Изд. Тип. Т-ва И.Н. Кушнерев, 1913, էջ 7:

<sup>20</sup> Տե՛ս **Васильева Н. В.** Юридические и неюридические средства в системе

նորմն իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման միջոցներից է, որն այլ միջոցների հետ՝ հնարավորություն է տալիս հասնելու նպատակին և արդյունքներին: Այժմ փորձենք ներկայացնել իրավանորմի ընդհանուր բնութագիրը: Հարկ ենք համարում ի սկզբանե նշել, որ սույն աշխատանքի շրջանակներում չենք շոշափելու իրավաբանական դոկտրինում իրավանորմերի շուրջ առկա հիմնահարցերը:

«Նորմ» եզրույթը, որն առաջացել է լատիներեն «norma» բառից, նշանակում է «կանոն», «նմուշ»<sup>21</sup>: Երբեմն այն մեկնաբանվում է որպես «պարտադիր միջոց», «հաստատված կարգ»<sup>22</sup>, որոշ դեպքերում՝ որպես «օրինականացված միջոց»<sup>23</sup> կամ «օրինականացված որոշում»<sup>24</sup>: Փիլիսոփայության մեջ նորմը հասկացություն է, որը որոշում է այն սահմանները, որոնց շրջանակներում երևույթները, համակարգերը, մարդկային գործունեությունը, վարքը և հաղորդակցությունը պահպանում են իրենց որակներն ու գործառույթները՝ հաղորդելով վերջիններիս համաչափություն<sup>25</sup>: Այս առումով որպես նորմի խնդիր հանդես է գալիս փոփոխելիության սահմանները սահմանելու միջոցով անփոփոխելիության պահպանումը<sup>26</sup>: Ըստ էության, նորմերն ի հայտ են գալիս որպես շրջապատող իրականության ընկալման հոգևոր-գործնական միջոցներ, ճանաչողության եղանակներ և սուբյեկտների միջև փոխհարաբերություններ հաստատելու համար անհրաժեշտ պայմաններ<sup>27</sup>: Այստեղից էլ բխում է, որ յուրաքանչյուր նորմի՝ որպես յուրահատուկ կարգավորիչի համար նվազագույնը բնութագրական է կարգուկանոն հաստատելու կամ որոշակի կանոններ սահմանելու միջոցով որոշակի կարգ պահպանելու կամ այնպիսի ցուցիչներ սահմանելու ձգտումը, որը կապահովի առօրյա կարգը:

Իրավունքի տեսանկյունից ևս իրավանորմը հասարակական հարաբերությունների կարգավորիչ է, մարդկային գիտակցված գործունեության արգասիք: Այն հանդես է գալիս որպես իրավական միջնորդավորման գիտակցված պահանջմունքների արդյունք, իրավունքի միջոցով հասարակական հարաբերությունների կարգավորման անհրա-

---

правового регулирования: дисс. канд. юрид. наук. Омск, 2014, էջ 50:

<sup>21</sup> Новый энциклопедический словарь. М.: Изд. Большая российская энциклопедия; РИПОЛ классик, 2004, с. 819.

<sup>22</sup> Черных П. Я. Историко-этимологический словарь современного русского языка: В 2 т. 3-е изд., стереотип. Т.1. М.: Изд. Рус. яз., 1999, с. 578.

<sup>23</sup> Ожегов С. И., Шведова Н. Ю. Толковый словарь русского языка: 80 000 слов и фразеологических выражений. 4-е изд., доп. М.: Изд. А ТЕМП, 2006, с. 421.

<sup>24</sup> Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան: Եր.: Հայաստանի րիտ., 1976, էջ 1083:

<sup>25</sup> St u Всемирная энциклопедия: Философия / Главн. науч. ред. и сост. А. А. Грищанов. М.: Изд. АСТ, 2001, էջ 711:

<sup>26</sup> St u Илалутдинов А. И. Структура нормы права: монография. Казань: Изд. Центр инновационных технологий, 2013, էջ 7:

<sup>27</sup> St u Всемирная энциклопедия: Философия [...], էջ 712:

ժեշտություն<sup>28</sup>: Ինչպես նշում է Կ. Մարքսը, օրենսդիրն իրեն պետք է տեսնի որպես բնագետ: Վերջինս ոչ թե ստեղծում կամ հայտնագործում է օրենքներ, այլ հոգևոր հարաբերությունների ներքին օրենքները ձևակերպում և արտահայտում է գիտակցված դրական օրենքներում<sup>29</sup>:

Իրավական սկզբունքից հետո իրավանորմն իրավական համակարգի հաջորդ կարևոր տարրն է: Կան իրավագետներ, որոնք իրավանորմը ներկայացնում են որպես իրավունքի առաջնային բջիջ, վերջինիս բովանդակության մաս, իրավունքի համակարգի ելակետային կառուցվածքային տարր<sup>30</sup>: Բնական է, որ իրավանորմին բնորոշ են իրավունքի՝ որպես սոցիալական երևույթի հիմնական հատկանիշները, որը, սակայն, չի հանգեցնում վերջիններիս նույնականացմանը: Իրավանորմերն արտահայտում և կարգավորում են հասարակական հարաբերությունները, որին անմիջականորեն մասնակցում է պետությունը:

Եթե խնդրին մոտենում ենք իրավական համակարգի տեսանկյունից, ստացվում է, որ պետությունը ձևավորում է հասարակական (սոցիալական) հարաբերությունների մոդել, որն արտացոլվում է իրավանորմում և իրավանորմի տեսքով՝ օրենքում. իրավանորմը վերածվում է այդ մոդելի անմիջական կենսագործումն ապահովող իրավական միջոցի, որոնք (իրավանորմերը), ներառվելով իրավական համակարգ, ցույց են տալիս վերջինիս ինչպիսին լինելը: Իրավանորմերը նաև հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու իրավունքի, վերջինիս էության, բովանդակության, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ազդեցության կառուցակարգերի մասին: Մինևույն ժամանակ իրավանորմը որպես հարաբերականորեն ինքնուրույն իրավական միջոց, ունի նաև իրեն բնորոշ հատկանիշները՝ իրավանորմի ընդհանուր բնույթը, համակարգվածությունը, ձևական որոշակիությունը, պաշտոնական-պարտադիր բնույթը, հարկադրականությունը<sup>31</sup>, և կառուցվածքային տարրերը հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա, որոնք հնարավորություն են տալիս տարանջատելու իրավական այլ միջոցներից:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել,

---

<sup>28</sup> St u Нормы советского права. Проблемы теории / Под ред. М. И. Байтина, З. К. Бабаева З.К. Саратов: Изд. Саратов. ун-та, 1987, էջ 67:

<sup>29</sup> St u **Маркс К.** Проект закона о разводе // **Карл Маркс и Фридрих Энгельс**, Сочинения. 2-е изд., Т. 1. М.: Изд. Государственное издательство политической литературы, 1955, էջ 162:

<sup>30</sup> St u, օրինակ, **Байтин М. И.** Сущность права (современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, Изд. СГАП, 2001, էջ 178:

<sup>31</sup> Իրավանորմի հատկանիշների մասին ավելի մանրամասն տե՛ս **Байтин М. И.** նշվ. աշխ., էջ 180-184, **Нерсисян В. С.** Общая теория права и государства: учебник. М.: Изд. Норма, 2012, էջ 394-396, **Рассолов М. М.** Теория государства и права: учебник для академ. бакалавр. М.: Изд. Юрайт, 2014, էջ 284-391, **Поляков А. В., Тимошина Е. В.** Общая теория права. учебник. 2-е изд. СПб.: Изд. С.-Петербург. гос. ун-та, 2015, էջ 331-336, **Ա. Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն / ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատ., 2017, էջ 132-137, **Վ. Ա. Ներսեսյան**, Իրավունքի և պետության տեսություն / թարգ. ռուս. հայերեն Վ. Նազարյան, Ս. Մինոնյան, Վ. Էլոյան: Եր.: Նաիրի հրատ., 2001, էջ 149-151:

որ իրավանորմը հասարակական հարաբերությունների անմիջական կարգավորման իրավական միջոց է, որում սահմանվում են իրավունքի նպատակների կենսագործման և արդյունքների արձանագրման համար անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները, ինչպես նաև այդ պայմանների և հնարավորությունների խախտման հետևանքները:

Առաջարկում ենք այսքանով սահմանափակվել և անդրադառնալ իրավանորմի ու իրավական կանխավարկածի տարբերություններին: Իհարկե, իրավական կանխավարկածին՝ որպես իրավական միջոցի ևս բնորոշ են իրավանորմի որոշ հատկանիշներ: Ե՛վ առաջինը, և՛ երկրորդը իրավական համակարգի, վերջինիս բովանդակության բաղկացուցիչ մասն են: Մակայն որպես առանձին իրավական միջոցներ դրանց միջև առկա են տարբերություններ, որոնք հանգում են հետևյալին.

➤ իրավական կանխավարկածը չունի այն կառուցվածքը, որը բնորոշ է իրավանորմին (հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա): Իրավական կանխավարկածը՝ որպես օժանդակ իրավական միջոց, հնարավորություն է տալիս ձևավորելու իրավանորմի կառուցվածքը, որը հատկապես կարևոր է իրավաստեղծ գործունեության ժամանակ.

➤ իրավական կանխավարկածը կարող է արտահայտվել ինչպես նախադասության տեսքով, այնպես էլ մեկ բառով, արտահայտության տեսքով կամ առանց բառերի ու արտահայտությունների կամ նախադասության: Հարկ է նկատի ունենալ, որ խոսքը ոչ թե այն մասին է, որ իրավական կանխավարկածը շարադրվում է իրավանորմի կառուցվածքային տարրերում, այլ այն, որ այս կամ այն բառի, արտահայտության առկայությունը հնարավորություն է տալիս մտածելու իրավանորմի կառուցվածքային տարրերում նկարագրված պայմանների, հնարավորությունների և հետևանքների առկայության կամ բացակայության մասին.

➤ իրավական կանխավարկածները հասարակական հարաբերությունները կարգավորում են ոչ ավանդական ձևով: Մասնավորապես, եթե իրավանորմերը հասարակական հարաբերությունների վրա ազդում են անմիջականորեն, սուբյեկտներին շնորհում են իրավունքներ և պարտականություններ, թույլ են տալիս կատարել որոշակի գործողություններ կամ պարտավորեցնում են ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց, ամրագրում են հարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման պայմանները, ապա իրավական կանխավարկածներն այդ ազդեցությունը գործում են միջնորդավորված ձևով: Իրավական կանխավարկածը ոչ թե նախատեսում է, օրինակ, իրավունքներ կամ պարտականություններ, այլ հնարավորություն է տալիս պարզապես մտածելու իրավունքների և պարտականությունների առկայության կամ բացակայության մասին.

➤ իրավանորմերը, ինչպես իրավական սկզբունքները, չեն կարող հերքվել, մինչդեռ կանխավարկածը, կրելով պերֆորմատի բնույթ, կարող է հերքվել: Օրինակ, երբ ասում ենք, որ գործում է օրենքի կամ



դրանում շարադրված իրավանորմերի սահմանադրությանը համապատասխանության կանխավարկածը, իսկ այնուհետև սահմանված իրավական կառուցակարգերի միջոցով պարզվում է, որ օրենքը կամ դրանում տեղ գտած այս կամ այն իրավանորմը հակասում է սահմանադրությանը, այդ դեպքում հերքում ենք ոչ թե օրենքը, այլ այդ օրենքի մասին այդպես մտածելու հնարավորությունը:

Ասվածը անշուշտ չենք կարող համարել ամբողջական և հիմնավոր, քանի դեռ այն քննարկման առարկա չի դարձել կոնկրետ օրինակների շրջանակներում: Հարկ է նկատել, որ ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես էլ ճյուղային իրավագիտության շրջանակներում իրավական կանխավարկածների շուրջ հետազոտությունների ճնշող մասը կատարված է վերացարկված մակարդակում՝ առանց օրինակների (խնդիրների), ինչը բնականաբար չի կարող նպաստել կանխավարկածի էության ամբողջական բացահայտմանը: Ինչևէ...

Մեր առջև դրված խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք ընտրել Ե. Վ. Բուլիգինի մարտավարությունը, որի շրջանակներում հեղինակը փորձել է հակադրվել իրավագետներ Հանս Կելզենին, Ջոզեֆ Ռազին, Ջուլյ Բոլմանին, Ֆերնանդո Ատրիային և Ռոլանդ Դվորկին<sup>32</sup>: Մարտավարության էությունն այն, որ Ե. Վ. Բուլիգինն իր առջև դրված խնդիրները փորձել է քննարկել սկզբում պարզ, իսկ հետո ավելի բարդ օրինակների շրջանակներում:

Ինչպես արդեն նշվեց, իրավանորմերն օգտագործվում են ինչ-որ բան պարտավորեցնելու, արգելելու կամ թույլատրելու համար: Հետևաբար, վերջիններս չեն կարող լինել ճշմարիտ կամ կեղծ. իրավանորմերը կարող են պահպանվել կամ խախտվել: Միևնույն ժամանակ, իրավական կանխավարկածները կարող են օգտագործվել որևէ առարկայի առկայության կամ բացակայության, ներառյալ իրավանորմի այս կամ այն կերպ մեկնաբանման մասին մտածելու նպատակով, որը, սակայն, կարող է հերքվել: Եթե մի պահ դուրս գանք իրավունքի շրջանակներից և խնդիր դիտարկենք առօրյա կյանքում՝ նորմն օգտագործելով որպես կանոն, ապա չի բացառվում, որ վերջինս և կանխավարկածը կարող են շարադրված լինել միևնույն կերպ, ինչը, անշուշտ, դրանք տարաջատելու հարցում կարող է որոշ դժվարություններ առաջացնել:

Դիցուք, պատկերացնենք ուսումնական հաստատության ներսում՝ պատին, փակցված է ցուցանակ, որի վրա գրված է. «Շենքի ներսում ծխելն արգելվում է, եթե այլ տեղ փակցված չէ, որ այստեղ ծխելը թույլատրվում է»: «Ծխելն արգելվում է» արտահայտությունը կարող է մեկնաբանվել որպես նորմ, այն է՝ «շենքի ներսում արգելվում է ծխել»: Միևնույն ժամանակ այն կարող է մեկնաբանվել որպես կանխավարկած, այն է՝ «գործում է շենքի ներսում «ծխելն արգելվում է» կանխավարկա-

<sup>32</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Булыгин Е. В.** Избранные работы по теории и философии права. Пер. с английского, немецкого, испанского / под науч. ред. М. В. Антонова, Е. Н. Лисанюк, С. И. Максимова. СПб.: Изд. Алеф-Пресс, 2016, էջ 80-89:

ծր: Իրականում, երբ հարցին մոտենում ենք այն տեսանկյունից, թե երբ է թույլատրվում շենքի ներսում ծխելը, ապա ակնհայտ է դառնում, որ գործ ունենք ոչ թե կանխավարկածի, այլ նորմի հետ: Մասնավորապես, նորմն ուղղակի կարգադրում է, թե ինչպիսի վարքագիծ պետք է ցուցաբերել շենքի ներսում: Այդ վարքագծից շեղում թույլատրվում է միայն այն դեպքում, երբ առկա կլինի մեկ այլ նորմ, ըստ որի՝ կթույլատրվի ծխելը: Կանխավարկածն այն է, որ երբ պատին փակցված նորմը կարդում ենք, ապա այն մեզ թույլ է տալիս մտածել ամբողջ շենքում ծխելու արգելքի մասին: Կանխավարկածը կարող է հերքվել, եթե շենքի ներսում հանդիպենք մեկ այլ ցուցանակի, որի վրա գրված կլինի, որ այստեղ ծխելը թույլատրվում է: Իսկ ինչ վերաբերում է «ծխելու արգելքի» նորմին, ապա այն շարունակում է գործել մյուս բոլոր տեղերում: Հետևաբար, երկրորդ ցուցանակի առկայությունը ոչ թե հերքում է առաջինի (նորմի) գոյությունը, այլ տվյալ վայրում նշված նորմից նախատեսում է բացառություն (մեկ այլ նորմ): Հարկ է նկատել, որ կարող է լինել նաև հակառակ կանոնը. «Շենքի ներսում ծխելը թույլատրվում է, եթե այլ տեղ փակցված չէ, որ այստեղ ծխելն արգելվում է»: Այս դեպքում արդեն սկսելու ենք մտածել շենքի ներսում ծխելը թույլատրվում է կանխավարկածով:

Այժմ վերադառնանք իրավանորմին և իրավական կանխավարկածին: Վերցնենք ՀՀ Սահմանադրության<sup>33</sup> 39-րդ հոդվածը, որտեղ ասվում է, որ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանն ու օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Թե քանիսը կանդեն, որ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածն իրավանորմ է, չենք կարող ասել, սակայն շատերը կլինեն, ովքեր կհամաձայնեն այն տեսակետին, որ սույն դեպքում գործ ունենք իրավական սկզբունքի հետ: Միևնույն ժամանակ սույն հոդվածից բխում է, որ ՀՀ իրավական համակարգում գործում է «թույլատրվում է անել այն ամենը, ինչն արգելված չէ» իրավական կանխավարկածը:

Դիտարկենք նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի<sup>34</sup> (այսուհետ՝ «Օրենսգրք») 227-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան մեկ տարի: Օրինակ՝ հարց է առաջանում. ընկերության ներսում մի կողմից աուդիտի և մյուս կողմից ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգմանը ձևի և բովանդակության տեսանկյունից կարո՞ղ են նույն պահանջները ներկայացվել, թե՞ ոչ:

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի<sup>35</sup> (այսուհետ՝

<sup>33</sup> Ընդունվել է 06.12.2015 թ.: ՀՀՊՏ 2015.12.21/, Հաստիկ թողարկում: Հոդ. 1118:

<sup>34</sup> Ընդունվել է 09.11.2004 թ.: ՀՀՊՏ 2004.12.21/69(368): Հոդ. 1385:

<sup>35</sup> Ընդունվել է 04.12.2019 թ.: ՀՀՊՏ 2019.12.23/96(1549).1: Հոդ. 1211.2:

«Օրենք») 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածների դիտարկումը ցույց է տալիս, թե ինչ պետք է հասկանալ Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված «աուդիտ» բառի տակ: Մասնավորապես, գործատուի՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով նախատեսված իրավունքը հստակ սահմանափակված է Օրենքով նախատեսված որոշակի պայմաններ կատարելու պարտականությամբ: Ակնհայտ է, որ, օրինակ՝ ընկերության ֆինանսական տնօրենը երբևէ չի կարող կատարել գումարային արժեքների աուդիտ և հայտնաբերել խախտում: Հետևաբար, աուդիտի ստուգում անցկացնելու դեպքում ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով նախատեսված սկզբունքից նախատեսվում է բացառություն և միևնույն ժամանակ Օրենքով նախատեսված իրավանորմի ուժով հերքվում է վերը նշված կանխավարկածի հաշվին այդ կերպ մտածելու հնարավորությունը:

«Աուդիտ» բառից հետո Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառվում է «ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում» ձևակերպումը: Այսինքն՝ խախտումը կարող է հայտնաբերվել նաև ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման ընթացքում, որոնց իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ որևէ սահմանափակում չի նախատեսվում՝ ի տարբերություն աուդիտի: Այլ խոսքով ասած՝ գործատուի՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով նախատեսված իրավունքն այս դեպքում արդեն սահմանափակված չէ, և գործում է «կարող է կատարել այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով» կանխավարկածը, քանի դեռ այն չի հերքվել: Խոսքը վերաբերում է այն բանին, որ համապատասխան հրամանի առկայության դեպքում ընկերության ֆինանսական տնօրենը կարող է իրականացնել գումարային արժեքների ստուգում: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում գործատուի իրավունքը կարող է սահմանափակվել, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով:

Եթե ամփոփելու լինենք, ապա կստանանք հետևյալ պատկերը: Մասնավորապես, Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է երկու իրավական կանխավարկած: Եթե խոսքը վերաբերում է աուդիտին, ապա Օրենքը հստակ նախատեսում է աուդիտի իրականացման կարգն ու պայմանները: Հետևաբար, գործում է այդ կարգով և պայմաններով աուդիտ անցկացնելու կանխավարկածը, քանի դեռ այլ կանոն նախատեսված չէ: Ինչ վերաբերում է ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգմանը, ապա այս դեպքում ՀՀ օրենսդրությունը սահմանափակում չի նախատեսում, և գործում է «թույլատրվում է անել այն ամենը, ինչն արգելված չէ» իրավական կանխավարկածը:

**Եզրահանգում:** Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել հետևյալը:

- Իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում

ներկայացնելով իրավանորմի՝ որպես իրավական միջոցի ընդհանուր բնութագիրը, արձանագրեցինք, որ իրավանորմը հասարակական հարաբերությունների անմիջական կարգավորման իրավական միջոց է, որում սահմանվում են իրավունքի նպատակների կենսագործման և արդյունքների արձանագրման համար անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները, ինչպես նաև այդ պայմանների և հնարավորությունների խախտման հետևանքները:

➤ Իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում քննարկելով իրավանորմի և իրավական կանխավարկածի հարաբերակցությունը՝ արձանագրեցինք, որ որպես առանձին իրավական միջոցներ՝ վերջիններիս միջև առկա են տարբերություններ, որոնք են.

- իրավական կանխավարկածը չունի այն կառուցվածքը, որը բնորոշ է իրավանորմին (հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա): Իրավական կանխավարկածը՝ որպես օժանդակ իրավական միջոց, հնարավորություն է տալիս ձևավորելու իրավանորմի կառուցվածքը,

- իրավական կանխավարկածը կարող է արտահայտվել ինչպես նախադասության տեսքով, այնպես էլ մեկ բառով, արտահայտության տեսքով կամ առանց բառերի ու արտահայտությունների կամ նախադասության: Իրավական կանխավարկածը ոչ թե շարադրվում է իրավանորմի կառուցվածքային տարրերում, այլ այս կամ այն բառի, արտահայտության առկայությունը հնարավորություն է տալիս մտածելու իրավանորմի կառուցվածքային տարրերում նկարագրված պայմանների, հնարավորությունների և հետևանքների առկայության կամ բացակայության մասին,

- իրավական կանխավարկածները հասարակական հարբերությունները կարգավորում են ոչ ավանդական ձևով: Մասնավորապես, եթե իրավանորմերը հասարակական հարբերությունների վրա ազդում են անմիջականորեն, սուբյեկտներին շնորհում են իրավունքներ և պարտականություններ, թույլ են տալիս կատարել որոշակի գործողություններ կամ պարտավորեցնում են ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց, ամրագրում են հարբերությունների առաջացման, փոփոխման և դադարման պայմանները, ապա իրավական կանխավարկածներն այդ ազդեցությունը գործում են միջնորդավորված ձևով: Իրավական կանխավարկածը ոչ թե նախատեսում է, օրինակ, իրավունքներ կամ պարտականություններ, այլ հնարավորություն է տալիս պարզապես մտածելու իրավունքների և պարտականությունների առկայության կամ բացակայության մասին,

- իրավանորմերը, ինչպես իրավական սկզբունքները, չեն կարող հերքվել, մինչդեռ կանխավարկածը, կրելով պերֆորմատի բնույթ, կարող է հերքվել:

**Բանալի բառեր** - իրավական կանխավարկած, իրավանորմ, իրավունքի գործիքակազմային տեսություն, իրավական միջոց, վարքագծի կանոն, քաղաքացիաիրավա-

*կան նորմ, նորմատիվ կարգադրություն, քաղաքացիաիրավական կանխավարկած, իրավաբանական փաստ, օժանդակ իրավական միջոց, իրավական համակարգ, սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ*

**ГЕВОРГ ВИРАБЯН – Соотношение правовой презумпции и правовой нормы.** – Проблема соотношения правовых презумпции и нормы отнюдь не нова. По этому поводу сформировались две точки зрения: является или не является правовая норма правовой презумпцией. Одна группа учёных склонна отождествлять правовую презумпцию с правовой нормой, другая группа отрицает их отождествление. Иными словами, праведы не могут выработать единый подход к важной проблеме, что, естественно, препятствует разработке общей теории интегрирования отраслевых подходов к правовым презумпциям.

В статье поддерживается подход, согласно которому правовые презумпция и норма не могут быть отождествлены. В первую очередь затронуты проблемы соотношения правовой презумпции и правовой нормы, их преимущества и недостатки, далее в рамках инструментальной теории права рассматриваются ещё два вопроса.

**Ключевые слова:** *правовая презумпция, правовая норма, инструментальная теория права, правовое средство, правило поведения, гражданско-правовая норма, нормативное предписание, гражданско-правовая презумпция, юридический факт, вспомогательное правовое средство, правовая система, субъективные права и обязанности*

**GEVORG VIRABYAN – Correlation of Legal Presumption and Legal Norm.** – In legal doctrine, the problem of the correlation between a legal presumption and a legal norm is by no means new. The subject of scientific debate, formed by two points of view, is whether a legal presumption is a legal norm or not. In particular, one group of scientists is inclined to equate a legal presumption with a legal norm, while another group tries to deny the identification of the latter. In other words, jurists cannot develop a unified approach to this problem, which, naturally, prevents the development of the concept of a general theory of integration of sectoral approaches to legal presumptions.

Regarding the problem under discussion the author adheres to an approach that does not identify a legal presumption with a legal norm. Therefore, in order to develop the concept of a general theory of integrating sectoral approaches to legal presumptions within the framework of this article, the author first turned to the existing approaches on the correlation between a legal presumption and a legal norm, the advantages and disadvantages of the latter, and then tried to solve this problem within the framework of the instrumental theory of law; (1) a general description of a legal norm as a legal measure was presented, listing the differences between a legal norm and a legal presumption, (2) the correlation between a legal norm and a legal presumption as an auxiliary legal measure was discussed.

**Key words:** *legal presumption, legal norm, instrumental theory of law, legal measure, rule of conduct, civil legal norm, regulatory prescription, civil legal presumption, legal fact, auxiliary legal measure, legal system, subjective rights and obligations*